




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝  
ՔՆԱՊԱՌՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



«26» 09 2018թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔԵՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔԵՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 80

Ձեռնարկողը՝

**<<Դավիթ Փարեմուզյան>> ԱԶ**

Լոռու մարզ, գ. Դերեն

Գործունեությունը՝

Բորբոքթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Քարալանց  
գեղամասի /ընդլայնում և ժամկետի երկարաձգում/  
արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետրվություն

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-  
տնօրենի Ժ/Ա՝**



Ռ. Ուսկանյան

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 80

«26 » 09 2018թ.

**Բորբոքթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Քարալանջ  
տեղամասի /ընդլայնում և ժամկետի երկարացում/ արդյունահանման  
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեդրվուն**

|                           |   |
|---------------------------|---|
| Պատվիրատու՝               | «Հավիթ Փարեմուզյան» ԱԶ  |
| Ներկայացված նյութեր՝      | Շրջակա միջավայրի վրա ազդեցության<br>գնահատման հաշվետվություն՝ և կից լուսավորքեր |
| Գործունեության կատեգորիա՝ | «Ա»   |
| Տեղադրման վայրը՝          | Լոռու մարզ, Թումանյան համայնք   |



Հանքավայրի Քարալանջ տեղամասի դիաբազային պորֆիրիտների պաշարները ըստ C1 կարգի 261.4հազ.մ<sup>3</sup> քանակով հաստատվել են Բնապահպանության նախարարության ՕՀՊԳ կողմից 09.02.2007թ թիվ 129 որոշմամբ: Պաշարները հաստատվել են որպես հումք երեսպատման բլոկների արտադրության համար: Երեսպատման համար պիտանի բլոկների ելքը ընդունվել է 30.3%: Թույլատրելի է համարվել արդյունահանման թափոնների օգտագործումը շինարարական խճի և ավագի արտադրության համար:

Հանքավայրում մնացորդային պաշարները կազմում են 258206մ<sup>3</sup>: Հանքավայրը շահագործվում է 2007թ-ից, գործող հանքավայրի տարածքը կազմում է 0,44հա, տրամադրվող հանքավայրինը՝ 1,7հա:

Բորբոքթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Քարալանջի տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Լոռու մարզի Թումանյանի ենթաշրջանում:

Հետախուզված տեղամասը լեռնային հողածածկ ճանապարհով կապված է մոտակա Ղերետ (16կմ) և Դսեղ (20կմ) գյուղերի հետ:

Տեղամասը գրաղեցնում է 1,7հա մակերես և գտնվում է 2153-2210մ բացարձակ բարձրությունների վրա: Բացահանքի ծառայման ժամկետը կազմելու է 50տ:

Բորբոքթի հանքավայրի Քարալանջ տեղամասի լեռնատեխնիկական պայմանները հնարավորություն են տալիս հանքարդյունահանման աշխատանքները կատարել բաց լեռնային աշխատանքների միջոցով:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը:

- ամենամեծ երկարությունը – 190,0մ;
- ամենամեծ լայնությունը – 106,0մ;
- ամենամեծ խորությունը – 50,0մ;

- հանքաստիճանների բարձրությունը – 5.0մ;
- ենթաստիճանի բարձրությունը – 2.5մ;
- անվտանգության բերմայի լայնությունը – 2.0մ;
- հանքային դաշտի օտարման տարածքը – 2.0 հա;
- օգտակար հանածոյի հաշվեկշռային մնացորդային պաշարները – 258206մ<sup>3</sup>;
- օգտակար հանածոյի կորզվող պաշարները – 234965 մ<sup>3</sup>;
- մակարացման ապարների քանակը – 32371մ<sup>3</sup>:

Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ բացահանքի նախագծային կորուստներն են՝ ըստ օգտակար հաստաշերտի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանների, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում, այդ կորուստները կազմում են 23241մ<sup>3</sup> կամ 9.0% և շահագործողական կորուստները, որոնք պայմանավորված են հանքաստիճանների բացման ժամանակ բացող կիսախրամների անցման ժամանակ տեղի ունեցող կորուստներով՝ այդ կորուստները կազմում են 0.5 %:

Բացահանքը փաստացի բացված է, սակայն նրա բնականոն աշխատանքի համար անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնանախապատրաստական աշխատանքները:

1. Բացահանքի հյուիս-արևելյան կողմից մինչև 2200մ նիշ ունեցող հորիզոնը մուտքային ավտոճանապարհի անցում  $L=350\text{m}$ ,  $b=7.0\text{m}$ ,  $V=1160.0\text{m}^3$ :
2. 2195 և 2200մ նիշ ունեցող հանքաստիճաններից ապարների հեռացում  $2632\text{m}^3$  ծավալով:
3. Արդյունաբերական հրապարակի կարգաբերում  $800\text{m}^3$ :

Բացահանքի հանքաստիճանների բացումը կատարվելու է հորատական ավտոճանապարհից հորիզոնական բացող կիսախրամների անցումով՝ կիսախրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 7.0մ:

Կիսախրամների անցումը կատարվելու է հորատասեպային աշխատանքների և բուլղոզեր T-170, էքսկավատոր ՅՕ-4321 (հակառակ բահ), ավտոինքնաթան ԿրԱՅ-256Բ լեռնատրանսպորտային համալիրով:

Մակարացման ապարները բացահանքային դաշտի տարածքում ներկայացված են փխրուն-թեկորային դեյտիվիալ առաջացումներով և խիստ ճաքճքված դիաբրազային պորֆիրիտներով (փուշտա):

Հանքաստիճանի հատակում ապարները T-170 մակնիշի բուլղոզերով հաջորդաբար տեղափոխվելու են 10-15մ հեռավորության վրա ու կուտակվում /առանձին-առանձին/: Այնուհետև կուտակված ապարները ՅՕ-4321 էքսկավատորով բարձվում են ԿրԱՅ-256Բ ավտոինքնաթանի մեջ ու տեղափոխվում լցակույտ:

Դիաբրազային պորֆիրիտների հաստաշերտի մշակման ժամանակ հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել միակողանի, ընդայնական ընթացքաշերտերով՝ մշակման համակարգով, մակարացման ապարներն արտաքին լցակույտ տեղափոխելով: Ընդունված մշակման համակարգի տարրերը հաշվարկված են համաձայն հանքավայրի շահագործման տեխնոլոգիական սխեմայի, որով նախատեսվում է միաքարի արդյունահանման աշխատանքները կատարել հորատասեպային աշխատանքների եղանակով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

1. Հանքաստիճանի բարձրությունը
  - աշխատանքայինը – 2.5մ;
  - վերջնական դիրքում, մարելուց հետո – 5.0մ;
2. Հանքաստիճանի թեքման անկյունը հորիզոնի նկատմամբ - 90°;
3. Ընթացքաշերտի լայնությունը – 1,0մ;

4. Հանույթային բլոկի երկարությունը – 6-8մ;

5. Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը – 20,0մ:

Բլոկների բարձումը կատարվում է KC-4560 մակնիշի ավտոկոռունկի միջոցով: Բլոկների արտադրության ժամանակ արտադրական թափոնները T-170 բուլղոգերի միջոցով աշխատանքային հանքաստիճաններում տեղափոխվելու են մինչև 10-15ն միջին հեռավորության վրա և կուտակվում: Այնուհետև, կուտակված թափոնները հակառակ բահով սարքավորված  $0,65\text{m}^3$  շերեփի տարրողությամբ ԹՕ-4321 մակնիշի եքսկավատորով բարձելու են ԿրԱ3-256Բ ավտոինքնաթափի թափքի մեջ և տեղափոխվում 450.0մ միջին հեռավորության վրա գտնվող լցակույտ և պահեստավորվում փուշտայի հետ միասին:

Կուտակված արտադրական թափոնների բարձումը ԿրԱ3-256Բ ավտոինքնաթափի մեջ կատարվելու է ԹՕ-4321 մակնիշի միաշերեփ եքսկավատորով:

Բլոկների տեղափոխումը բացահանքից մինչև մշակման արտադրամաս 25կմ միջին հեռավորության վրա և արտադրական թափոնների տեղափոխումը մինչև լցակույտ 0.45կմ միջին հեռավորության վրա նախատեսվում է իրականացնել ԿրԱ3-256Բ ավտոինքնաթափով:

Լցակույտ առաջացնող ապարները  $196141\text{m}^3$  ընդհանուր ծավալով ներկայացված են փուլս-բեկորային մակարացման ապարներով  $10365\text{m}^3$ , փուշտայից-22006մ $^3$  և թափոններից  $163770\text{m}^3$ :

Լցակույտառաջացումը կատարվելու է բացահանքի նախկինում շահագործված տարածքում և նրան հարակից մասում, որը նույնականացնելու համար շահագործված է: Լցակույտը տեղադրված է բացահանքի արևելյան մասում՝ 2150մ նիշ՝ ունեցող հորիզոնից:

Փիլրուն-բեկորային ապարները պահեստավորվելու են առանձին իսկ փուլսան և թափոնները միասին փիլրուն-բեկորային ապարների լցակույտի նախամուրյամբ:

Լցակույտերի գրադեցրած ընդհանուր տարածքը կազմում է  $8440\text{m}^2$  և առանձին բարձրությունը  $16.0\text{m}$ ,  $2150\text{m}$  նիշ ունեցող հարթակի մակերեսը  $6343\text{m}^2$ .

Փուշտան ու թափոնները մնում են պահեստում որպես խօս. հումք հանագայում օգտագործելու համար:

Բացահանքի մշակված տարածության վերակուլտիվացիան կատարվելու է բացահանքը ըստ խորության ամբողջությամբ շահագործելուց հետո, իսկ թափոնների լցակույտի (խօսի հումքի պահեստ) մակերևույթի հարթեցում կատարվելու է լեռնային աշխատանքների ավարտից հետո:

Բացահանքի մշակված տարածության վերակուլտիվացիայի նպատակով փիլրուն-բեկորային մակարացման ապարները պայմանականորեն տեղափոխվելու են մշակված տարածություն, փուլելու բացահանքի հատակին և հարթեցվելու:

Ապարների տեղափոխումը (հրումը) մշակված տարածություն, ինչպես նաև փռումը բացահանքի հատակին և հարթեցումը կատարվելու է TO-170 բուլղոգերով: Ունեցող համար անհրաժեշտ ծախսը կազմի  $934.44\text{ադ. դրամ:}$

Դանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի շրջանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանության ուղղված հետևյալ միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, որին տրվում է համապատասխան թերություն՝ թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը ապահովելու նպատակով:

- Օգտագործված յուղերի ու քայլուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուժի համար կամ երկրորդական վերամշակման համար:

- Փոշենստեցման նպատակով ժանապարհներին նախատեսվում է ջրացանում տարվա չոր և շոգ օրերին:
  - Մեթենաների աշխատանքի ժամանակ՝ սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում՝ վնասակար նյութերի արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով: Մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քսայուղերի արտահոսքի վերահսկում և կանխում:
  - Օգտագործվող ագրեգատների և սարքավորումների սարքին վիճակում աշխատեցում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները քացառելու նպատակով:
  - Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:
  - Սոցիալական ազդեցություններին ուղղված միջոցառումներ:
  - Խախտված տարածքի ռեկուտիվացիա:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիմագրություններ.

- Մրնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ տարին երկու անգամ հաճախականությամբ:
  - Արտադրական հրապարակի տարածքը նավթամթերքների աղտոտումից գերծ պահելու նպատակով տարին մեկ անգամ հողերի աղտոտվածության նշտադիտարկում:
  - Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Զրային ավագանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

ԵԶՐԱՆՎԳՈՒ

Հանքարդյունահանճան աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Լոռու մարզի Թումանյան համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին նաև նախագծել են բնապահականության նախարարության ստորաբաժանումները: Առկա է <<Արտադրական վտանգավոր գրակտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության>> փորձաքննական դաշտական եզրակացություն:

## Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

3. Գործունեության իրականացման արդյունքում առաջացած թափոնների (օգտագործված յուղեր, քսայուղեր, հնամաշ դետալներ և այլն) կառավարումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Դավիթ Փարեմուզյան>> ԱՀ-ի կողմից ներկայացված Բորբոքի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի թարալանջ տեղամասի /ընդլայնում և ժամկետի երկարացում/ արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջմերի պարտադիր կատարման պայմանով:



Ա. Ղոնոյան

Զուտնաչյան